

**Առցանց ջրաչափիչ սարքերի տեղադրման ծառայության գնում կազմակերպելու և պայմանագիր կնքելու մասին**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «ՀրազՁԷԿ» ԲԲԸ-ում 04.12.2023թ. ժամը 11<sup>00</sup>–ին:

Նիստին մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Է.Մանամյան – Տնօրենների խորհրդի անդամ՝ անկախ տնօրեն,

Հանձնաժողովի նախագահի տեղակալ

Է.Մովսիսյան - նորոգման, շահագործման վարչության պետ

Հանձնաժողովի անդամներ՝

Տ.Մարտիրոսյանը- գլխավոր ճարտարագետ

Ե.Բաղդասարյան–ԳՃՏ կայանի տարածքում գործող այլ արտադրությունների աշխատանքների համակարգման գծով

Ս.Հակոբյան - ԿՏԱ պետ

Լ.Մնացականյան - Էլեկտրական արտադրամասի պետ

Ռ.Հակոբյան - տնտեսագիտական վարչության պետի տեղակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

Ս.Մարգարյան - տնտեսագիտական վարչության առաջատար ճարտարագետ-տնտեսագետ

Տեխնիկական խորհրդատվության համար նիստին հրավիրված էր ՋԱ և ՉԱ-ի պետի տեղակալ Ա.Խաչատրյանը:

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ **օրակարգը**.

1. Առցանց ջրաչափիչ սարքերի տեղադրման ծառայության ձեռքբերման գնային առաջարկների քննարկում, պայմանագրի կնքում:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Համաձայն ՀՀ ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2022թ. հուլիսի 07-ին ընդունված ՀՕ-316Ն օրենքի «ՀրազՁԷԿ» ԲԲԸ-ի ջրօգտագործման և ջրահեռացման հանգույցներում անհրաժեշտ է տեղադրել առցանց ջրաչափեր:

Նշված գնման չափաքանակները տեղադրված են 2023թ. չորրորդ եռամսյակի գնումների լրամշակված պլանում (գեկուցագիր № 87, 29.11.2023թ., կցվում է):

Առցանց ջրաչափիչ սարքերի տեղադրման ծառայության գնման համար ընտրվել է գնման պարզեցված ընթացակարգը, համաձայն «ՀրազՁԷԿ» ԲԲ ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրության 8.4 կետի և 12 կետի դրույթների և ձևակերպվել է **ՀԶ-ՊԸ-ԱՁ3-23-3/29.11.23** ծածկագիրը:

Ընկերության մասնագետների կողմից ծառայության արժեքների որոշման նպատակով կատարվել է շուկայի ուսումնասիրություն: Գնային առաջարկներ ներկայացնելու հրավերներ են արվել մասնագիտացված կազմակերպություններին և ստացված առաջարկներով լրացվել է մրցակցային աղյուսակը.

Գնման առարկան	Ապրանքների մատակարարման վայրը	Գնման հարցում ուղարկված կազմակերպությունների անվանումները	Ստացված առաջարկությունների մասին տվյալներ /1 միավորի համար/
Օգտագործված տեխնիկական ջրի վերադարձ, (բաց ջրավազան, մի մասը թափվում է Հրազդան գետը, խողովակի արտաքին տրամագիծը՝ 219մմ, ներքինը՝ 203մմ)	Հրազդեհ ԲԲԸ	Հայ-Գերմանական Արագեն ՀՁ ՍՊԸ	460000 դրամ, ԱԱՀ -ով (ներառում է 1 տարվա տվյալների փոխանցման և սպասարկման արժեքը, Վաքի տեղադրում Հրազդեհ-ի կողմից)
	Հրազդեհ ԲԲԸ	Հակոբ Հայկի Գրիգորյան ԱԶ	1 հատ x 650000 առանց տվյալների փոխանցման արժեքի
	Հրազդեհ ԲԲԸ	Հիդրո Սոլյուշնս ՍՊԸ	550000 դր, ԱԱՀ-ով, առանց 8000դր. տվյալների փոխանցման և 25000դր. սպասարկման ամսական վճարի

Ըստ ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրության, ընթացակարգի հաղթող կճանաչվի սահմանված չափորոշիչներին և տեխնիկական պայմաններին համապատասխանող և նվազագույն առաջարկ ներկայացրած մասնակիցը:

Համադրելով ստացված գնային առաջարկները և տեղադրվող սարքավորումների տեխնիկական պայմանները, որոշում է կայացվել նախապատվությունը տալ Հայ-Գերմանական Արագեն ՀՁ ՍՊԸ-ին, քանի որ ներկայացված գնային առաջարկը և տեխնիկական պայմանները ամենաշահավետն են: Ըստ ներկայացված գնային առաջարկի ուլտրաձայնային մակարդաչափի զինը տեղադրումով կազմում է 460000 դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ սպասարկումով:

Վերլուծելով մրցակցային աղյուսակի տվյալները գնահատող հանձնաժողովը **որոշեց.**

1. ՀՁ-ՊԸ-ԱՁ3-23-3/29.11.23 ծածկագրով պարզեցված ընթացակարգով գնման մրցույթում հաղթող ճանաչել Հայ-Գերմանական Արագեն ՀՁ ՍՊԸ-ին:

2. Կնքել պայմանագիր Հայ-Գերմանական Արագեն ՀՁ ՍՊԸ-ի հետ, համաձայն մրցակցային աղյուսակի տվյալների՝ 460000 դրամ (ներառյալ ԱԱՀ) տարեկան սպասարկումով:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Է. Սանամյան

Է. Մովսիսյան


Տ. Մարտիրոսյան

Ե. Բաղդասարյան

Ս. Հակոբյան

Լ. Մնացականյան

Ռ. Հակոբյան



Handwritten signatures in blue ink corresponding to the names listed on the left. The signatures are: 1. A complex, stylized signature for E. Sanamyan. 2. A signature for E. Movsisyan. 3. A signature for T. Martirosyan. 4. A signature for Y. Bagdasaryan. 5. A signature for S. Hakobyan. 6. A signature for L. Mnatsakanian. 7. A signature for R. Hakobyan.